ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի տեղաբաշխման կետերի և նրանց տեղաբաշխման և օգտագործման համար Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող հողատարածքների, զորանոցային և բնակելի ավանների հանձնման ու օգտագործման կարգի մասին» համաձայնագիրը նպատակահարմար է կնքել ելնելով 1992 թվականի սեպտեմբերի 30-ին Երևանում կնքված «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող Ռուսաստանի Դաշնության սահմանապահ զորքերի կարգավիճակի ու նրանց կենսագործունեության պայմանների մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 11-րդ հոդվածով նախատեսված պահանջներից: Միջկառավարական մակարդակով Համաձայնագրի կնքման նպատակահարմարությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Համաձայնագրով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության իրավասության մեջ մտնող հարաբերություններ և Համաձայնագիրն ենթակա է հաստատման Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից, քանի որ դրա կնքումը բխում է ուժի մեջ մտած Պայմանագրից:

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն